ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մարտունի **13.05.2026թ.**

ժ/09:30

Նիստին մասնակցել են

- Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
- Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ղազարյան, Թ. Դավթյան
- Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Սիմոնյան

1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման արդյունքների մասին:
3. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Ընդունել ի գիտություն, որ «Մ-Դ» ՍՊԸ-ի և «Սառնա» ՍՊԸ-ի հայտերում արձանագրվել էին հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ինչի կապակցությամբ հանձնաժողովը կասեցրել էր նիստը, և քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել էր մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

2.2 Հանձնաժողովն ուսումնասիրեց «Մ-Դ» ՍՊԸ-ի և «Սառնա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկումները:

2.3 Ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները, և նրանց հայտերը գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի և հրավերի պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

3.1 «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մ-Դ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.2 «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/21» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Սառնա» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի, անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3.4 Անգործության ժամկետի ավարտից հետո, օրենքով սահմանված կարգով, ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել.

Պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10% (տասը տոկոս) չափով (միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրի տեսքով):

Որակավորման ապահովում՝ գնման գնի 15% (տասնհինգ տոկոս) չափով (միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրի տեսքով):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Հ. Ղազարյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան